ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՓՍԻՈՒՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑՆ ՈՒՍՈՒԲ ԲԵԿ ԹԵՄՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի 2-րդ փողոցն անվանափոխել քաղաքական, հասարակական, ռազմական, ազգային ազատագրական գործիչ, հայ ազգի բարեկամ Ուսուբ Բեկ Թեմուրյանի անվամբ՝ «Ուսուբ Բեկ Թեմուրյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՅՐԱՄՋՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՓՍԻՈՒՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑՆ ՈՒՍՈՒԲ ԲԵԿ ԹԵՄՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսուբ Բեկ Թեմուրյանը քաղաքական, հասարակական, ռազմական, ազգային ազատագրական գործիչ է, Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի 1-ին և 2-րդ գումարումների պատգամավոր, 1918 թվականի Մայիսյան հաղթական հերոսամարտերի մասնակից, հրամանատար:

Հայ-եզդիական բարեկամական կապերի ձևավորման և ամրապնդման գործում անուրանալի է 1918թ. մայիսյան հերոսամարտերի հերոս, Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Անդրկովկասի եզդիների առաջնորդ Ուսուբ Բեկ Թեմուրյանի դերը: Նրա և այլ երևելիների (Կոմիտաս, Դրո, Ավ. Իսահակյան, Ս. Վրացյան) անձնական կապերն ու բարեկամությունը նպաստել են մեր ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Եզդի ժողովուրդը հայության հետ եղել է մեր պատմության ամենաճակատագրական պահերին, մենք միասին կիսել ենք օսմանյան կայսրության ազգային խտրականության քաղաքականության զրկանքները, թուրքական պետության ցեղասպան քաղաքականության ողբերգական հետևանքները: Մյուս կողմից՝ հայերիս հետ միասին եզդի ժողովուրդը ճաշակել է 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի հաղթանակի բերկրանքն ու Հայոց անկախ պետականության ծնունդը: Առաջին Հանրապետության վարչապետ Ս. Վրացյանը դիպուկ նշել է. «Հայերի չափ և, թերևս հայերից էլ ավելի, եզդիները նախանձախնդիր էին Հայաստանի անկախության ու ոչինչ չէին խնայում նրա պաշտպանության համար»:

1896 թվականից Թեմուրյանը եղել է Անդրկովկասի եզդիների առաջնորդը, ծառայել է Հայաստանի պետականության վերականգնման և կայացման մեծ նպատակին՝ դրա մեջ տեսնելով նաև եզդիների ապահով կյանքն ու ապագան:

Ուսուբ Բեկ Թեմուրյանը հայ ժողովրդի մեծ բարեկամներից է: Վերջինս գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի 1-ին հանրապետության կերտման, հայկական պետականության կայացման դժվարին գործում՝ դառնալով հայ և եզդի ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

Այսօր էլ, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քանակով ամենամեծ ազգային համայնքը, եզդի ժողովուրդը հայերի հետ միասին իր արժեքավոր ավանդն է ներդնում մեր պետության ամրապնդման և զարգացման գործում: Նրա զավակները կյանքի գնով պաշտպանում են հայրենիքը:

Երևան քաղաքում Ուսուբ Բեկ Թեմուրյանի անվամբ փողոց ունենալու նախաձեռնության մասին իրենց անվերապահ դրական կարծիքն են հայտնել ՀՀ արտաքին գործերի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 16-րդ կետի բ) ենթակետը և նկատի ունենալով, որ 2019 թվականին լրացավ Ուսուբ Բեկ Թեմուրյանի ծննդյան 150-ամյակը՝ առաջարկում եմ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի 2-րդ փողոցն անվանափոխել հայ ազգի բարեկամ Ուսուբ Բեկ Թեմուրյանի անվամբ՝ «Ուսուբ Բեկ Թեմուրյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԷՅՐԱՄՋՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՓՍԻՈՒՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑՆ ՈՒՍՈՒԲ ԲԵԿ ԹԵՄՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Լեփսիուսի 2-րդ փողոցն Ուսուբ Բեկ Թեմուրյան փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՓՍԻՈՒՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑՆ ՈՒՍՈՒԲ ԲԵԿ ԹԵՄՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Լեփսիուսի 2-րդ փողոցն Ուսուբ Բեկ Թեմուրյան փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՅՐԱՄՋՅԱՆ